ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 169 -Ա

ք.Արտաշատ

13 հունիսի 2025թ.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 17-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Արարատի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հունիսի 20-ին ժամը 10:30–ին կայանալիք մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթը կազմակերպել մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում, մրցույթի արդյունքները ներկայացնել մարզպետին:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2025 թ. ---------- ---
N ---------- որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հրաչ Դավթյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Կոստանյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ,

Հանձնաժողովի անդամներ՝

Արտակ Գրիգորյան - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ,

Մարիամ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արարատ» մասնաճյուղի տնօրեն,

Ռուզան Մարտիրոսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ,

Մարգարիտա Մարգարյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

Սերգեյ Կտրակյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Восстановимая подпись

Անորոշագրող
ՀՐԱՉ ԴԱՎԹՅԱՆ
1208830066

X

Подписано: DAVTYAN HRACH 1208830066 Հ.ԴԱՎԹՅԱՆ